

**ԱՆՊԼԵՐԵՆԻ ԶԵՂՎԱԾ ԱՆԴԱՄՈՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾԱՌՎԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

ՔՐԻՍՏԻՆԵ ՍՈՂԻԿՅԱՆ, ՆԱՐԻՆԵ ԳԻՇՅԱՆ

Հաղորդակցման գործընթացում, այդ թվում՝ նաև խոսքային հաղորդակցման ակտերի ժամանակ, ակնհայտ է հուզականության և գնահատողականության հաղորդումը զանազան լեզվական արտահայտչամիջոցներով՝ հնչերանգայինից մինչև քերականական:

Հուզականության և գնահատողականության շարահյուսական արտահայտչամիջոցների թվում կենտրոնական տեղ է զբաղեցնում զեղչված անդամով նախադասությունը:

Հաղորդակցման գործընթացում զեղչումը կարող է իրացնել մի շարք գործառույթներ, օրինակ՝ ներգործում, բնութագրում, գնահատում և այլն: Այնուամենայնիվ, այս բոլոր հաղորդակցական գործառույթների իրացման ժամանակ զեղչման անքակտելի հատկանիշը տնտեսումն է:

Զեղչված անդամով նախադասությունների բաղադրյալ հաղորդակցական արժեքի հաշվառմամբ են կարևորվում դրանց ուսումնասիրությունն անգլերենում և համապատասխան թարգմանությունները հայերենում:

Այս հոդվածի նպատակն է ուսումնասիրել զեղչված անդամով նախադասությունների գործաբանական և կառուցվածքային առանձնահատկություններն անգլերենում և այդ արժեքների պահպանման եղանակները հայերեն թարգմանություններում:

Խոսակցական լեզվի համար հատկանշական է լեզվական նշանների խնայողությունը: Խոսակցական լեզուն իրավիճակի լեզու է, կենդանի հաղորդակցման միջոց, որն էլ հիմնականում արտահայտվում է կենդանի զրույցի՝ երկխոսության միջոցով:

Զեղչված անդամով նախադասությունների հաղորդակցական գործառույթը, որը պայմանավորված է խոսքային իրավիճակով, տարբեր կերպ և տարբեր գործառական իմաստներ է արտահայտում:

Ձեռչված անդամով նախադասությունների գործարանական իմաստն անմիջականորեն կախված է համատեքստից, ինչպես նաև զեղչված անդամով նախադասության քերականական կառուցվածքից:

Անգլերենը, լինելով վերլուծական լեզու, առանձնանում է զեղչված անդամով նախադասությունների բազմազանությամբ: Անգլերենում զեղչված անդամով նախադասությունների դասակարգմանն անդրադարձել է Կ. Գուզեևան¹ առանձնացնելով զեղչման յոթ կաղապարներ՝ [S] + P, [S + Aux] + Pr, [S + Be] + N/ Adj/ Adv, [S + P] + Adv m/ O/ Att, S + [Aux] + Pr, S + [be] + Pr, S + [P]²: Ինչպես տեսնում ենք, անգլերենում բազմաթիվ են զեղչված անդամով կառույցները, և տարբերակված է զեղչվող անդամը:

Հայերենում զեղչված անդամով նախադասությունների դասակարգմանը բազմիցս անդրադարձել են մի շարք հայագետներ՝ Ս. Աբրահամյանը³, Մ. Ասատրյանը⁴, Վ. Ավագյանը⁵, Ա. Պապոյանը և Խ. Բաղիկյանը⁶, ովքեր առանձնացնում են զեղչված անդամով հետևյալ կաղապարները՝ [S] + P, S + [P], S + P + [Aux], S + [CV] + Pr, [S] + Pr + [CV], [S + P] + Adv m/ O/ Att, [S] + P + [O]:

¹ **Гузеева, К. А.** (1966), Неполные предложения в современном английском языке. Автореферат дис. канд. фил. наук, Л. (Guzeeva, K. A. (1966) nepolnie predlojeniya v sovremenom angliskom yazike. Avtoreferat dis. Kand. Fil. Nauk, L).

² S – subject, P – predicate, Pr – predicative, Aux – auxiliary (also link verbs and modal verbs), O – object, Adv – adverb, Adj – adjective, N – noun, Adv m – Adverbial modifier, Att – attribute, CV – connective verb.

³ **Աբրահամյան Ս. Գ.** (1962), Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր. Երևան, ՀՍՄԻ ԳԱ (Abrahamyan, S. G. (1962), Zhamanakakic hayereni sharahyusutyun mi qani harcer, Yerevan, HSSR GA):

⁴ **Ասատրյան Մ.Ե.** (1987), Ժամանակակից հայոց լեզու. Շարահյուսություն, Երևան, «Երևանի պետ. համալսարան» (Asatryan M. (1987), Zhamanakakic hayoc lezu. Sharahyusutyun, Yerevan, “Yerevani pet. Hamalsaran”):

⁵ **Ավագյան Վ. Գ.** (1983), Շարահյուսություն, Երևան, «Լույս» (Avagyan, V. G. (1983), Sharahyusutyun. Yerevan, “Luys”):

⁶ **Պապոյան Ա., Բաղիկյան Խ.** (2003), Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, «Երևանի պետ. համալսարան» (Papoyan, A., Badikyan, Kh. (2003), Zhamanakakic hayoc lezvi sharahyusutyun. Yerevan, “Yerevani pet. Hamalsaran”):

Անգլերեն	Հայերեն
[S] + P	[S] + P
S + [P]	S + [P]
S + [Aux] + Pr	S + [Aux] + Pr
[S + P] + O/ Adv m/ Att	[S + P] + Adv m/ O/ Att
[S + Aux] + Pr/ N/ Adj/ Adv	–
–	S + P + [Aux]
–	[S] + Pr + [Aux]
–	[S] + P + [O]

Զուգադրելով անգլերենի և հայերենի զեղչված անդամով նախադասությունների կառուցվածքային կաղապարները՝ տեսնում ենք, որ, ի տարբերություն անգլերենի, հայերենում չեն առանձնացվում [S + Aux] + Pr/ N/ Adj/ Adv կաղապարները, իսկ անգլերենում բացակայում են S + P + [Aux], [S] + Pr + [CV] կաղապարները:

Մինչ անգլերենի բնագրի և հայերենի թարգմանության կառուցվածքային զուգադրմանն անդրադառնալը, համեմատական վերլուծական եղանակով կարևոր է հասկանալ թարգմանության դերն ու թարգմանական միջոցների արժեքը լեզվաբանության մեջ:

Ըստ պրոֆեսոր Զ. Քեթֆորդի⁷ թարգմանության առանցքային նպատակը թարգմանվող լեզվի մեջ համապատասխան համարժեքը գտնելն է, իսկ ըստ Կ. Մալմկյաերի⁸ տվյալ լեզվական խոսույթի իմաստը կամ իմաստները բնագիր լեզվից թարգմանվող լեզու փոխանցելն է:

Պ. Նյումարքն⁹ առանձնացնում է թարգմանական հետևյալ հնարները՝ բառ առ բառ թարգմանություն (Word-for-word), բառացի թարգմանություն (Literal), դարձվածային թարգմանություն (Idiomatic translation), հավատարիմ թարգմանություն (Faithful translation), իմաստային թարգմանություն (Semantic

⁷ Catford, J. C. (1965), *Linguistic Theory of Translation*. Oxford University Press.

⁸ Malmkjaer, K. (2005), *Linguistics and the Language of translation*. Edinburgh University Press.

⁹ Newmark, P. (1988), *Textbook of Translation*. Oxford: Pergamon Press, availableonline at <http://carynannerisly.wikispaces.com/file/view/A+Textbook+of+Translation+by+Peter+Newmark.pdf>.

translation), ազատ թարգմանություն (Free translation), բնականեցում (Naturalization), հաղորդակցական թարգմանություն (Communicative translation), մշակութային համարժեք (Cultural equivalent), նկարագրական համարժեք (Descriptive equivalent), գործառույթային համարժեք (Functional equivalent), հոմանիշային համարժեք (Synonymy), տեղաշարժ (Shift), մոդուլացիա (Modulation), փոխհատուցում (Compensation), կրճատում (Reduction), ընդլայնում (Expansion), հարմարեցում (Adaptation), համադրում (Couplet), վերարտադրություն (Paraphrase), ընդունված թարգմանություն (Recognized) և նշումներ (Notes):

Շատ դեպքերում տարբեր կառույցների ունեցող զեղչված անդամով նախադասության միջոցով արտահայտված այս կամ այն գործառական-հաղորդակցական իմաստն անզլերենից հայերեն թարգմանության մեջ արտահայտվում է մեկ այլ խոսքի մասով կամ բառային միավորով, ինչը պայմանավորված է մեկ լեզվից մյուսը թարգմանություն կատարելու համար անհրաժեշտ մի շարք թարգմանական հնարների կիրառմամբ:

Առօրյա-խոսակցական լեզվի թարգմանությունը երբեմն կարող է հակասական լինել, քանի որ առօրյա-խոսակցական լեզուն կենդանի լեզու է և անընդհատ զարգացման փուլում է: Երկխոսությունների թարգմանական վերլուծությունը զեղարվեստական գրականության մեջ հնարավորություն է տալիս բացահայտելու առօրյա-խոսակցական լեզվի գործառական-հաղորդակցական առանձնահատկությունները հայերենում և անզլերենում: Գեղարվեստական գրականության մեջ զեղչումը փոխանցում է կերպարների հուզարտահայտչական հոգեվիճակը, նրանց փոխհարաբերություններն ու մշակույթը, ինչը հարկ է համարժեքորեն փոխանցել թիրախ լեզվում:

Անզլալեզու գրականությունից և համարժեք հայերեն թարգմանություններից ընտրված զեղչված անդամով հետևյալ կաղապարները հնարավորություն կտան զուգադրելու և վեր հանելու առօրյա-խոսակցական լեզվին բնորոշ գործառական-հաղորդակցական առանձնահատկությունները՝ ըստ զեղչված անդամով նախադասությունների կառուցվածքային կաղապարների՝ երկու լեզուներում և դիտարկելու դրանց թարգմանական համարժեքությունը համապատասխան թարգմանական հնարների կիրառմամբ:

1. "Don't you like Paris?"

"No."

"Why don't you go somewhere else?"

"Isn't anywhere else."

"You're happy, all right."

"Happy, hell!"¹⁰

- Դու Փարիզը չե՞ս սիրում:
- Ո՛չ:
- Ինչո՞ւ, ուրեմն ուրիշ տեղ չես գնում:
- Ուրիշ տեղ չկա:
- Բայց չե՞ որ քեզ համար այստեղ լավ է:
- Լա՛վ, չգիտեմ¹¹:

Վերոնշյալ օրինակում հետաքրքրական է դիտարկել զեղչված անդամով "Happy, hell!" նախադասությունը, որտեղ իրացվում է [S + Aux] + Pr կաղապարը: Ինչպես և անգլերենում՝ հայերեն թարգմանության մեջ ևս պահպանվել է [S + Aux] + Pr կաղապարը, սակայն բնագրի մեջ Pr (ստորոգելին) արտահայտված է adj (ածականով), իսկ հայերեն թարգմանության մեջ՝ adv (մակբայով): Համատեքստում դիտարկելիս ակնհայտ է, որ զեղչված նախադասությունն արտահայտում է հեզնանք, իսկ հայերեն թարգմանության մեջ հաղորդակցական իմաստը ճշգրիտ չի փոխանցվում: Դա պայմանավորված է զեղչված անդամով նախադասությանը հետևող "hell!" բացականչական նախադասության թարգմանությամբ, որը հայերենում թարգմանվում է «Չգիտեմ» զեղչված ենթակայով նախադասությամբ և արտահայտում թերահավատություն, կասկած: Այս օրինակում կիրառվել է մոդուլացիա թարգմանական հնարը, քանի որ տվյալ օրինակում չեն համապատասխանում բնագիր լեզվի և թարգմանվող լեզվի հաղորդակցական իմաստները: Կարծում ենք, որ բնագրի հաղորդակցական արժեքը կպահպանվեր, եթե այս նախադասությունը թարգմանվեր «Չէ մի չէ» առօրյա-խոսակցական ոճին բնորոշ արտահայտությամբ, որտեղ կկիրառվեր ազատ թարգմանության հնարը, ինչպես նաև դարձվածային հնարը, քանի որ այս արտահայտությունն առավել միտված է առօրյա ժարգոնին:

2. "What possessed you to bring her?"

"I don't know, I just brought her."

"You're getting damned romantic."

"No, bored."

¹⁰ Hemingway Ernest. (2006), The Sun Also Rises. New York. Simon & Schuster. p. 31.

¹¹ Հեմինգուեյ Էռնեստ (1985), Եվ ծագում է Արևը (Ֆիեստա), Երևան, «Սովետական գրող», էջ 22:

"Now?"

"No, not now."¹²

- Ինչը ստիպեց ձեզ նրան այստեղ բերել:
- Չզիտեմ, բերեցի հենց այնպես:
- Ռոմանտիկա՞ն է քեզ խեղդում:
- Ո՛չ, ձանձրոյթը:
- Հիմա՞ էլ:
- Հիմա՝ ոչ¹³:

Վերոբերյալ երկխոսության մեջ զեղչված են համարվում "No, bored" և "Now?" նախադասությունները: "No, bored" նախադասությունն ունի [S + Aux] + Pr կաղապարը, որի միջոցով ժխտվում է նախորդ ասույթը: Հայերեն թարգմանության մեջ կառուցվածքային կաղապարը չի պահպանվել, և իրացվել է S + [P + O] կաղապարը: Կիրառելով գործառնության համարժեք և տեղաշարժ հնարը՝ թարգմանչին հաջողվել է ճշգրտորեն փոխանցել զեղչված անդամով նախադասության հաղորդակցական իմաստը: Հաջորդող "Now?" հարցական նախադասության մեջ իրացվում է [Aux + S + P] + Adv m (of time) կաղապարը, որն այս համատեքստում արտահայտում է զարմանք: Նույն հաղորդակցական իմաստը հայերենում արտահայտվում է [S] + Adv m (of time) [P] կաղապարի միջոցով: Այս օրինակում կիրառվել է գործառնության համարժեք թարգմանական հնարը:

3. "Will you take a glass of wine with us, sir?" he asked.

"No. Thanks awfully. I have to go."

"Really going?" Brett asked.

"Yes," I said. "I've got a rotten headache."

"I'll see you to-morrow?"

"Come in at the office."

"Hardly."

"Well, where will I see you?"

"Anywhere around five o'clock."¹⁴

- Միգուցե մեզ հետ մի գավաթ գինի՞ կխմեիք, սըր:
- Ո՛չ: Խորապես շնորհակալ եմ: Ես պետք է գնամ:
- Դուք իսկապե՞ս գնում եք, - հարցրեց Բրեթը:

¹² Նույն տեղում, էջ 31:

¹³ Նույն տեղում, էջ 22:

¹⁴ Նույն տեղում, էջ 37:

- Այո՛, - ասացի: - Գլուխս սարսափելի ցավում է:
- Վաղը քեզ կտեսնե՞մ:
- Արի՛ խմբագրություն:
- Հազիվ թե:
- Այդ դեպքում՝ որտե՞ղ:
- Ժամը հինգի մոտ, որտեղ կուզես¹⁵:

Այս օրինակում հետաքրքրական է դիտարկել *"Really going?"* և *"Hardly"* նախադասություններն անգլերեն բնագրում և համապատասխան թարգմանությունները հայերենում: *"Really going?"* հարցական նախադասության մեջ իրացվում է [Aux + S] + Pr կաղապարը, որտեղ Pr-ն արտահայտվել է Participle I: Ի տարբերություն անգլերենի՝ հայերենում զեղչված նախադասությունը թարգմանվել է ամբողջական նախադասությամբ: Ինչպես անգլերենի զեղչված, այնպես էլ հայերենի ամբողջական նախադասություններն արտահայտում են զարմանք: Հաջորդող *"Hardly"* զեղչված նախադասությունն ունի [S] + adv + [P] կաղապարը, որը նույնությամբ պահպանվում է հայերենում՝ «Հազիվ թե» [S] + adv + [P] նախադասությամբ և արտահայտում է կասկած: Այս օրինակում իրացվել է հաղորդակցական թարգմանության հնարը, որտեղ կիրառվել է մշակութային առումով ամենաչեզոք համարժեքը:

4. "I have to work in the morning," I said. "I'm too far behind you now to catch up and be any fun."

"Don't be an ass."

"Can't do it."

"Right. Send him a tender message?"

"Anything. Absolutely."

"Good night, darling."¹⁶

- Առավոտյան պետք է աշխատեմ, - ասացի ես: - Եվ հետո ձեզնից շատ եմ հետ մնացել, ձանձրալի կլինի ինձ հետ:

- Հիմար մի՛ լինի:

- Չեմ կարող:

- Լավ: Ողջույն հաղորդե՞մ քո կողմից:

- Անպայման: Եվ շափ ջերմ:

- Բարի գիշեր, սիրելիս¹⁷:

¹⁵ Նույն տեղում, էջ 27:

¹⁶ Նույն տեղում, էջ 41:

¹⁷ Նույն տեղում, էջ 32:

Վերոբերյալ երկխոսության մեջ զեղչված անդամով նախադասություններ են համարվում *"Can't do it."*, *"Send him a tender message?"*, *"Anything."* նախադասությունները: Առաջին օրինակում իրացվում է [S] + P + O կաղապարը, որը գործառությանի համարժեք թարգմանական հնարի կիրառմամբ հայերեն թարգմանության մեջ փոխանցվել է [S] + Aux + [Pr + O] կաղապարի միջոցով: Զեղչման այս օրինակը հաղորդակցական արժեք չունի, իսկ զեղչումն իրականացնում է միայն տնտեսման գործառույթ: Հաջորդող հարցական նախադասությունն ունի [Aux + S] + P + IO + DO կաղապարը, որն առավել բնորոշ է առօրյա-խոսակցական ոճին: Հայերեն թարգմանության մեջ բայի դեմքն արտահայտվել է համապատասխան վերջավորությամբ, և [S] զեղչումը խնդրահարույց չէ՝ շնորհիվ բայի խոնարհման վերջավորության քերականական իմաստի, որը, ի թիվս այլ իմաստների, հատկորոշում է գործողությունը կատարողի առաջին դեմք լինելը: Կիրառելով ազատ թարգմանության հնարը՝ թարգմանիչը չի փոխանցել *"tender"* բառի իմաստը՝ բնագրի համաձայն, այլ փոխարենը՝ նույն բառը տեղափոխել է պատասխան ասույթ: Պատասխան նախադասության մեջ, ի տարբերություն անզլերենի, որտեղ իրացվել է [P + IO] + DO զեղչված կաղապարը, հայերենում փոխանցվել է [S + P] + Adj կաղապարը: Համատեքստային վերլուծության արդյունքում ակնհայտ է, որ երկու դեպքում էլ զեղչված անդամով այս նախադասություններն արտահայտում են հեզանք:

5. "Are you going to sell me that car?"

"Next week; I've got my man working on it now."

"Works pretty slow, don't he?"

"No, he doesn't," said Tom coldly. "And if you feel that way about it, maybe I'd better sell it somewhere else after all."¹⁸

- Ե՞րբ ես ինձ ծախում մեքենադ:

- Եկող շաբաթ: Վարորդս մի քիչ գործ ունի վրան:

- Դանդաղ է աշխատում:

- Հեջ էլ չէ, - սառը նետեց Թոմը: - Եթե չես ուզում սպասել, ուրիշին կծախես!¹⁹:

Վերոնշյալ օրինակում *"No, he doesn't"* նախադասության մեջ, S + Aux + [Pr + Adv m] (*"work slow"* adverbial modifier of manner) կաղապարը փոխանցվել է «Հեջ էլ չէ» ժխտական կառույցի միջոցով, որը հայերենի առօրյա-

¹⁸ Fitzgerald Scott. (2008), *The Great Gatsby*. Moscow. Jupiter-inter. p. 24.

¹⁹ Ֆիցջերալդ Ֆ. Սքոթ (1981), Մեծն Գեթսբին (թարգմանիչ՝ Սեֆերյան Ս.), Երևան, «Սովետական գրող», էջ 25:

խոսակցական ոճին պատկանող արտահայտություն է՝ միտված առօրյա ժարգոնին: Համատեքստից պարզ է դառնում, որ զեղչված կառույցն այստեղ ժխտում է նախորդ ասույթի իսկությունը՝ արտահայտելով զայրույթ: Թեև այս օրինակում կառուցվածքային կաղապարը չի պահպանվել, թարգմանչին հաջողվել է իմաստային և դարձվածային թարգմանության հնարների միջոցով պահպանել զեղչված անդամով նախադասության հաղորդակցական իմաստը:

6. “Neither of them can stand the person they’re married to.”

“Can’t they?”

“Can’t STAND them.” She looked at Myrtle and then at Tom.

“What I say is, why go on living with them if they can’t stand them? If I was them I’d get a divorce and get married to each other right away.”²⁰

- Տանել չեն կարող իրենց զույգին:

- *Մի՞թե:*

- Տանել չեն կարող: - Քեթրինը նայեց Միրթլին, ապա Թոմին: - Ուզում եմ ասել, ինչ կարիք կա այդպես ապրել: Եթե ես նրանց տեղը լինեի, կբաժանվեի ու անհապաղ կամուսնանայի սիրածս մարդու հետ²¹:

Վերոբերյալ օրինակում “Can’t they?” Aux + S + [Pr + O] կառույցն ունեցող հարցական նախադասությունը հայերենում չի պահպանել նույն կառուցվածքը և արտահայտվել է «*Մի՞թե*» երկբայական վերաբերականի միջոցով, որն առավել ցայտուն կերպով է փոխանցում հաղորդակցական իմաստը: Ձեղչված Aux + S + [Pr + O] կառույցով այս նախադասությունն արտահայտում է զարմանք և թերահավատություն, որը փոխանցվել է մոդուլացիա և գործառության համարժեք թարգմանական հնարների միջոցով:

7. “I know your wife,” continued Gatsby, almost aggressively.

“That so?”

Tom turned to me.

“You live near here, Nick?”

“Next door.”

“That so?”²²

- Ես ճանաչում եմ Ձեր կնոջը, - համարյա հարձակման անցնելով՝ շարունակեց Գեթսբին:

- *Իրո՞ք:*

²⁰ Նույն տեղում, էջ 32:

²¹ Նույն տեղում, էջ 31:

²² Նույն տեղում, էջ 91:

- Թունը շրջվեց իմ կողմը:
- Դու կարծես մոտերքում ես ապրում, Նի՛ք:
- Հարևան եմ:
- Մի՛թե²³:

Այս երկխոսության մեջ “*That so?*” [Aux] + S + Adv կաղապարն արտահայտում է հեզնանք, զայրույթ, որը հայերենում փոխանցվել է «*իրո՞ք*» վերաբերականի միջոցով: Հաջորդ՝ “*Next door.*” նախադասությունն ունի [S + P] + Adv m (adverbial modifier of place) զեղչված կաղապարը, որտեղ նախադասությունն արտահայտված է միայն տեղի պարագայով, իսկ հայերենում նույն զեղչված նախադասությունը թարգմանվել է «*Հարևան եմ*» [S] + P կաղապարն ունեցող բաղադրյալ անվանական ստորոգյալով: Ե՛վ անգլերենի, և՛ հայերենի զեղչված կաղապարներն իրականացնում են միայն տնտեսման գործառույթ: Բնագրի մեջ կրկին հանդիպում ենք “*That so?*” [Aux] + S + Adv կաղապարին, որն այս համատեքստում արտահայտում է զարմանք, թերահավատություն: Հայերենում, ինչպես և նախորդ դեպքում, նույն կաղապարն արտահայտվում է «*մի՛թե*» երկբայական վերաբերականի միջոցով և փոխանցում միևնույն գործառական-հաղորդակցական իմաստը: Կիրառելով հոմանիշային համարժեք և հաղորդակցական թարգմանության հնարները՝ թարգմանիչն առաջին դեպքում [Aux] + S + Adv կաղապարը փոխանցել է «*իրո՞ք*», իսկ երկրորդ դեպքում միևնույն կաղապարն արտահայտվել է «*մի՛թե*» երկբայական վերաբերականի միջոցով:

8. She looked down at the grass.

“This is a rotten game we play, isn't it?”

“What game?”

“Don't be dull.”

“I'm not, on purpose.”²⁴

Նա սկսեց խոսերին նայել:

- Ձեզ չի՞ թվում, որ կեղտոտ խաղ ենք խաղում:

- Ի՞նչ խաղ:

- Հիմար մի՛ ձևացեք:

- Մտքովս էլ չի անցնում²⁵:

²³ Նույն տեղում, էջ 84:

²⁴ Hemingway Ernest. (2006), A Farewell to Arms. New York. Simon & Schuster. p. 32.

²⁵ Հեմինգուեյ Էռնեստ (1972), Հրաժեշտ զենքին (թարգմանիչ՝ Զեյթունյան Պ.), Երևան, «Հայաստան», էջ 29:

Վերոնշյալ օրինակում հատկանշական է դիտարկել “I’m not, on purpose” նախադասությունը, որտեղ իրացվում է S + Aux + [Pr] (արտահայտված՝ adj.) + Adv. m. (of manner) կաղապարը: Ձեղչված ստորոգելիով այս կառույցը ժխտում է նախորդ ասույթի իսկությունը և արտահայտում մեղմ զայրույթ: Հայերեն թարգմանությունն ավելի ազատ է, և միևնույն հաղորդակցական իմաստը փոխանցվել է «Միքրովս էլ չի անցնում» ամբողջական նախադասությամբ: Կիրառելով ազատ թարգմանության հնարը՝ թարգմանիչը փոքր-ինչ շեղվել է բնագրի բովանդակությունից: Կարծում ենք, որ «Հո դիտմամբ չե՛մ անում» նախադասությունն առավել ճշգրիտ կփոխանցեր բնագրի հաղորդակցական իմաստը: Այստեղ կիրառել ենք մոդուլացիա թարգմանական հնարը՝ փորձելով փոխանցել բնագիր տեքստի իմաստը՝ թարգմանվող լեզվի նորմերին համապատասխան:

9. “You’ve got to stay,” I said. “Oh, you’re wonderful.”

I was crazy about her. I could not believe she was really there and held her tight to me.

“You mustn’t,” she said. “You’re not well enough.”

“Yes, I am. Come on.”

“No. You’re not strong enough.”

“Yes. I am. Yes. Please.”

“You do love me?”

“I really love you. I’m crazy about you. Come on please²⁶”.

- Դուք պետք է մնաք,- ասացի ես: - Դուք հրաշալի եք:

Կորցրել էի խելքս: Չէի հավատում, որ նա իրոք իմ կողքին է, ու ես նրան ամուր սեղմեցի ինձ:

- Պետք չէ, - ասաց նա: - Դուք դեռ չեք առողջացել:

- Առողջացել եմ: Ինձ մոտ արի:

- Ո՛չ: Դուք դեռ թույլ եք:

- Թույլ չեմ: Արի՛:

- Սիրո՞ւմ եք ինձ:

- Շատ եմ սիրում: Կորցրել եմ խելքս: Ինդրում եմ, արի²⁷:

Վերը նշված երկխոսության մեջ դիտարկում ենք “Yes, I am.” S + Aux + [Pr] կաղապարն ունեցող պատասխան նախադասությունները, որտեղ առաջին դեպքում զեղչված կաղապարն արտահայտված է “well enough” մակ-

²⁶ Նույն տեղում, էջ 99:

²⁷ Նույն տեղում, էջ 84:

բայով, իսկ երկրորդ դեպքում՝ *“strong enough”* մակբայով: Երկու դեպքում էլ հաստատական նախադասությամբ արտահայտվում է ժխտում: Հայերենում կառուցվածքային կաղապարն իրացվում է «Առողջացել են» [S] + P կաղապարն ունեցող զեղչված ենթակայով հաստատական նախադասությամբ, իսկ երկրորդ դեպքում՝ «Թույլ չեն» [S] + P ժխտական մասնիկ պարունակող զեղչված ենթակայով նախադասությամբ: Այս օրինակում կիրառվել են գործառության ինքնարժեք և տեղաշարժ թարգմանական հնարները:

10. “Will you come to our wedding, Fergy?” I said to her once.

“You’ll never get married.”

“We will.”

“No you won’t.”

“Why not?”

“You’ll fight before you’ll marry.”

“We never fight.”

“You’ve time yet.”

“We don’t fight.”

“You’ll die then. Fight or die. That’s what people do. They don’t marry²⁸”.

- Կգա՞ք մեր հարսանիքին,- մի անգամ հարցրեցի նրան:

- Դուք երբեք չեք ամուսնանա:

- Կամուսնանանք:

- Ո՛չ, չեք ամուսնանա:

- Ինչո՞ւ:

- Կգժտվեք մինչև հարսանիք:

- Մենք երբեք չենք գժտվել:

- Դեռ շատ ժամանակ կա:

- Մենք երբեք չենք գժտվի:

- Ուրեմն կմեռնեք: Կամ կգժտվեք, կամ կմեռնեք: Միշտ այդպես է լինում: Ու ոչ ոք չի ամուսնանում²⁹:

Այս երկխոսությունը տեղի է ունենում ոչ պաշտոնական միջավայրում, որտեղ տեսնում ենք զեղչման տարբեր դեպքեր: Անգլերեն բնագրում դիտարկում ենք S + Aux + [Pr] կաղապարներով *“We will.”* *“No you won’t.”* նախադասությունները, որոնք հայերենում արտահայտվել են զեղչված ենթակայով նախադասություններով՝ [S] + P «Կամուսնանանք» «Ո՛չ, չեք ամուսնա-

²⁸ Նույն տեղում, էջ 115:

²⁹ Նույն տեղում, էջ 85:

նա»: Երկու դեպքում էլ կիրառվել է գործառության համարժեք թարգմանական հնարը: Առաջին դեպքում S + Aux + [Pr] կառույցն անգլերենում և զեղչված ենթակայով [S] + P նախադասությունը հայերենում հաստատում են նախորդ ասույթի իսկությունը՝ արտահայտելով վստահություն, հաստատում: Երկրորդ դեպքում պատասխանի “No you won’t.” S + Aux + [Pr] և «Ո՛հ, չէք ամուսնանա» [S] + P զեղչված կաղապարն ունեցող նախադասություններն արտահայտում են կասկած, թերահավատություն:

11. They did not answer. They did not have to answer. They were battle police.

“Take him back there with the others,” the first officer said. “You see. He speaks Italian with an accent.”

“So do you, you,” I said³⁰.

Չպատասխանեցին: Պարտավոր չէին պատասխանելու: Դաշտային ոստիկանությունն էր:

Տարե՛ք մյուսների մոտ,- ասաց առաջին սպան:- Լսեցի՞ք: Օտարի նման է իտալերեն խոսում:

Դու էլ ես այդպես խոսում, սրիկայի մեկը, - ասացի ես³¹:

Վերոբերյալ օրինակում Aux + S + [Pr + adv m (of manner)] կառույցն արտահայտում է զայրույթ: Նույն հուզարտահայտչական երանգը հայերենում փոխանցվել և պահպանվել է «Դու էլ ես այդպես խոսում» ամբողջական նախադասության միջոցով: Գործառական-հաղորդակցական իմաստն ավելի ցայտուն արտահայտվում է հաջորդող “you” դերանվան միջոցով, որը թարգմանիչն ավելի է սաստկացրել և արտահայտել «սրիկայի մեկը» կապակցության միջոցով: Այս երկխոսությունը հուզական, հանպատրաստից զրոյցի օրինակ է, որտեղ կիրառվել են մոդուլացիա և ազատ թարգմանության հնարները:

12. “But Snape always seemed to hate me so much.”

“Oh, he does,” said Quirrell casually, “heavens, yes³²”.

- Բայց Սառլեյն ինձ միշտ այնքա՛ն էր ատում...

- Իսկ ինչո՞ւ «էր»... Հիմա էլ է ատում, - ասաց Քուիրելը՝ կարծես չլսելով

³⁰ Նույն տեղում, էջ 238:

³¹ Նույն տեղում, էջ 204:

³² **Rowling Joanne.** (1997), Harry Potter and the Philosopher’s Stone. London. Bloomsbury. p. 171.

ինքն իր ասածը,- այն էլ ո՞նց է ատում...³³

Վերոնշյալ օրինակում “Oh, he does,” S + Aux + [Pr] նախադասությամբ խոսողը ոչ միայն համաձայնում է խոսակցի ենթադրությունների հետ, այլև արտահայտում հեգնանք և փորձում հուսահատեցնել խոսակցին: Հայերենում S + Aux + [Pr] կառույցը փոխանցվել է «Իսկ ինչո՞ւ «էր»...» նախադասությամբ, որտեղ առաջին նախադասությունը փոխանցվել է [S + Pr] + Aux կաղապարով, իսկ ներկա ժամանակաձևը՝ անցյալ ժամանակաձևով: Հայերեն թարգմանության մեջ խոսքն ավելի զգացմունքային է, իսկ գործառական իմաստն առավել արտահայտչական է «Հիմա էլ է ատում» [S] + P նախադասության շնորհիվ, որը բացակայում է բնագրում: Կիրառվել են տեղաշարժ և ազատ թարգմանության հնարները:

13. “Hope you have -- er -- a good holiday,” said Hermione, looking uncertainly after Uncle Vernon, shocked that anyone could be so unpleasant.

“Oh, I will,” said Harry.³⁴

- Քեզ բարի ... ըմ, արձակուրդներ,- ասաց Հերմիոնան՝ անվստահ նայելով քեռի Վերոնսի ետևից, ցնցված, որ կարող է որևէ մեկը այդքան անբարեհամբույր լինել:

- Օ՛հ, անշուշտ, ես համոզված եմ, որ արձակուրդները բարի են լինելու,- ասաց Հարրին...³⁵

Վերոնշյալ օրինակում S + Aux + [Pr + O] կաղապարի միջոցով խոսակիցը հաստատում է նախորդ ասույթի իսկությունը: Հայերենում “Oh, I will,” կառույցն արտահայտվել է ոչ միայն «անշուշտ» հաստատական վերաբերականի միջոցով, այլ նաև դրան հետևող ամբողջական նախադասությամբ, որը թեև բացակայում է բնագրում, սակայն թարգմանվածքում փոխանցում է խոսակիցների հույզերը՝ արտահայտելով համոզմունք և վստահություն՝ ի հեճուկս խոսակցի: Այս օրինակում կիրառվել են վերարտադրություն, իմաստային և ազատ թարգմանության հնարները: Կարծում ենք, որ հաղորդակցական արժեքն առավել ցայտուն կարտահայտվեր «Չկասկածես» [S] + P + [O] զեղչված կառույցի միջոցով, որտեղ կիրառում ենք մոդուլացիա և հաղորդակցական թարգմանության հնարները:


³³ Ռուլինգ Ջոան (2004), Հարրի Փոթթերը և Փիլիտիայական Քարը (թարգմանիչ՝ Մկրտչյան Լ.), Երևան, «Մեդիանեթ» ՍՊԸ, էջ 390:

³⁴ Նույն տեղում, էջ 181:

³⁵ Նույն տեղում, էջ 414:


Զուգադրելով զեղչված անդամով նախադասությունների կառուցվածքային կաղապարներն անգլերենում և համապատասխան հայերեն թարգմանության մեջ՝ գալիս ենք այն եզրակացության, որ բերված քսանմեկ օրինակներից միայն երեքում է պահպանվել կառուցվածքային կաղապարը, իսկ տասնութում չի պահպանվել:

Աղյուսակ 1. Անգլերենի զեղչված անդամով նախադասությունների կառուցվածքային կաղապարների պահպանման տոկոսային հարաբերությունը հայերենում՝



Վերլուծելով անգլերենի և հայերենի զեղչված անդամով նախադասությունների գործառական-հաղորդակցական իմաստները՝ նկատում ենք, որ վերոնշյալ զեղչված անդամով քսանմեկ օրինակներից տասնութում իմաստները պահպանվել են, միայն մեկ դեպքում՝ շեղվել, իսկ երկու օրինակներում իրացվում է զուտ տնտեսման գործառույթը:

Աղյուսակ 2. Անգլերենի զեղչված անդամով նախադասությունների գործառական-հաղորդակցական իմաստների պահպանման տոկոսային հարաբերությունը հայերենում՝



Անգլերենի զեղչված անդամով նախադասությունների և դրանց հայերեն թարգմանությունների ուսումնասիրության արդյունքում կարող ենք փաստել.

1. կառուցվածքային մակարդակում կաղապարները պահպանվել են միայն փոքրաթիվ դեպքերում: Կաղապարը չի պահպանվել երկու գործոնների շնորհիվ. ա) անգլերենի՝ որպես վերլուծական լեզու կառուցվածքային յուրահատկությունների (ի տարբերություն հայերենի, որը համադրական լեզու է), բ) թարգմանության ժամանակ իմաստի պատշաճ փոխանցման անհրաժեշտության, ինչի արդյունքում թարգմանիչը կիրառել է ոչ թե կաղապարը պահպանող բառ առ բառ (Word-for-word) կամ բառացի (Literal) թարգմանություն, այլ նախընտրել է իմաստային թարգմանություն (Semantic translation), ազատ թարգմանություն (Free translation), դարձվածային թարգմանություն (Idiomatic translation), հաղորդակցական թարգմանություն (Communicative translation), գործառույթային համարժեք (Functional equivalent), հոմանիշային համարժեք (Synonymy), տեղաշարժ (Shift), մոդուլացիա (Modulation), վերարտադրություն (Paraphrase) հնարները՝ միտված իմաստի և հաղորդակցական արժեքի պահպանմանը, որպես կառուցվածքի պահպանման նկատմամբ առաջնային գերակայություն:

2. Իմաստային մակարդակում շեղումները փոքրաթիվ են: Դրանք պայմանավորված են թարգմանչի կողմից բնագրի ոչ լիարժեք ընկալմամբ և թիրախ լեզվում համապատասխան համարժեքների ընտրության անկարողությամբ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել զեղչված անդամով նախադասությունների կառուցվածքային և գործաբանական առանձնահատկություններն անգլերենում և այդ արժեքների պահպանման եղանակները հայերենում: Հոդվածում զուգադրվել են անգլալեզու գրականությունից և համարժեք հայերեն թարգմանություններից ընտրված զեղչված անդամով կաղապարները՝ ըստ զեղչված անդամով նախադասությունների կառուցվածքային և գործառական առանձնահատկությունների: Դիտարկվել է դրանց թարգմանության համարժեքությունը՝ համապատասխան թարգմանության հնարների կիրառմամբ: Ուսումնասիրության արդյունքում կարող ենք փաստել, որ կառուցվածքային մակարդակում կաղապարները պահպանվել են միայն փոքրաթիվ դեպքերում, իսկ իմաստային մակարդակում շեղումներ գրեթե չկան:

Բանալի բառեր – զեղչված անդամով նախադասություններ, կառուցվածքային կաղապար, թարգմանական հնարներ, գործառական իմաստ:

СПОСОБЫ ВЫРАЖЕНИЯ ПРАГМАТИЧЕСКИХ ЗНАЧЕНИЙ АНГЛИЙСКИХ ЭЛЛИПТИЧЕСКИХ ПРЕДЛОЖЕНИЙ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

КРИСТИНЕ СОГИКЯН, НАРИНЕ ГИШЯН

Данная статья посвящена изучению структурных и прагматических особенностей эллиптических предложений в английском языке и методам сохранения этих значений в армянском. В статье сравниваются эллиптические структуры на примерах из английской литературы и их армянский перевод в соответствии со структурными и функциональными особенностями данных предложений. Нами рассматривается адекватность перевода с использованием методов перевода. Анализ эллиптических конструкций показал, что на структурном уровне грамматические конструкции сохранились в нескольких случаях, в то время как на семантическом уровне прагматические значения сохранились в большинстве случаев.

Ключевые слова – эллиптические предложения, структурная модель, методы перевода, прагматическое значение.

WAYS OF EXPRESSING PRAGMATIC MEANINGS IN ENGLISH ELLIPTICAL SENTENCES IN ARMENIAN

CHRISTINE SOGHIGYAN NARINE GISHYAN

The aim of this article is to analyze the structural and pragmatic characteristics of elliptical sentences of English and the means of preserving those features in Armenian translations. In the article elliptical sentences from English literature and the corresponding Armenian translations are juxtaposed according to the structural and pragmatic characteristics of these sentences. The equivalency

of these selected extracts have been considered according to different types of translation. It can be concluded that only in a small number of cases the clichés of the elliptical sentences on the structural level are preserved whereas the texts have semantically and pragmatically retained their inherent communicative value.

Key words – elliptical sentences, structural pattern, translation methods, pragmatic meaning.